

ԹԹՈՒՋՈՒՐ

Մակերես՝ 10.01կմ²

Բնակչություն՝ 356

Գյուղ Ապարանի տարածաշրջանում, Ապարան քաղաքից 9 կմ հարավ-արևելք: Մարզկենտրոնից գտնվում է 37 կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Ամիրլի, Իմերլու, Իմիրլու, Իմրլու անվանումները և Թթուջուր է վերանվանվել 1950 թ-ին:

Գյուղից հարավ պահպանված է Կարմիր վանք մատուռը՝ կառուցված 17-րդ դարում: Այստեղ է գտնվում ս. Հարություն եկեղեցին:

Գյուղը տեղադրված է Ծաղկունյաց լեռների արեւմտահայաց լանջերին, Քասաղ գետի ձախ ափին:

Գյուղը գտնվում է ծովի մակարդակից 1910 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 160-180, հունվարյանը՝ -60,-80:

Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ: Բնական լանդշաֆտները սելահողային տափաստաններ են:

Ունի հանքային աղբյուրներ: յուղի միջով հոսում է Քասաղ գետի ավազանին պատկանող Թթուջուր վտակը:

Գյուղի բնակչության նախնիները ներգաղթել են Արեւմտյան Հայաստանի Մուշի եւ Ալաշկերտի շրջաններից: 1831 թ-ին ունեցել է 146, 1873 թ-ին՝ 380, 1939 թ-ին՝ 661, 1959 թ-ին՝ 419, 1979 թ-ին՝ 337 հայ բնակիչ: Համայնքի բնակչությունը կազմում է 346 մարդ, որից 53%տղամարդիկ են, 47%՝ կանայք: Բնակչության մեջ մինչաշխատունակները կազմում են 32%, աշխատունակները՝ 51%, հետաշխատունակները՝ 17%: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց: Գյուղն ունի 78 տնտեսություն:

Համայնքի տնտեսության մասնագիտացման ուղղությունը գյուղատնտեսությունն

է: Գյուղատնտեսական հողահանդակների հիմնական մասն օգտագործվում է որպես վարելահողեր, խոտհարքեր: Զբաղվում են բանջարաբոստանային, հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ: Տնամերձ հողակտորներում կան բազմամյա տնկարկներ: Պահուստային հողերը զբաղեցնում են համայնքի մակերեսի 60%, որոնց մեջ 326 հա կազմում են արոտավայրերը, 32հա՝ վարելահողերը: Գյուղատնտեսական համախառն բերքի մեծ մասը բաժին է ընկնում ոչխարաբուծությանը: Զբաղվում են կաթնամսատու անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ, մեղվապահությամբ:

Արդյունաբերություն չունի:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարելուրվում է խմելու եւ ոռոգման ջրի ջրագծերի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը: